

recently developed and proposed products of insurance coverage. We suggest possible ways to enter the foreign markets for leading market companies. Within the framework of this article is proposed the introduction of a new insurance product, such as insurance coverage for the "Mining of the Crypto-Currency farm".

ՍՈՖՅԱ ՊՐՈՒՏՅԱՆ

Առդիկ, մագիստրատուրա 1-ին կուրս

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՎՐԱ

Հիմնաբառեր. եկամտային հարկ, դրույքաչափ, տեղեկատվական տեխնոլոգիաներ, արտարժույթ

Հոդվածում քննարկվում է եկամտային հարկի դրույքաչափի փոփոխությունը ՀՀ-ում: Ուսումնասիրվել և համեմատվել են Հայաստանի և Հնդկաստանի եկամտային հարկի դրույքաչափերը: Հոդվածի նպատակն է՝ պարզել եկամտային հարկի դրույքաչափի փոփոխության ազդեցությունը ՀՀ-ում օտարերկրյա կազմակերպությունների ներդրումների վրա:

Եկամտային հարկը ՀՀ հարկային օրենսգրքի 141-րդ հոդվածով հարկման օբյեկտի համար նախատեսված, սահմանված կարգով, չափով և ժամկետներում պետական բյուջե վճարվող պետական հարկ է:

Օրենսգրքի 140-րդ հոդվածի համաձայն՝ եկամտային հարկ վճարողներ են համարվում ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք: Անհատ ձեռնարկատերերը և նոտարները՝ որպես ֆիզիկական անձինք, եկամտային հարկ վճարողներ են համարվում միայն անձնական եկամուտների մասով:

2018 թ. հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետությունում գործում են եկամտային հարկի նոր դրույքաչափեր: Համեմատելով 2 տարիների դրույքաչափերը՝ կարող ենք ասել, որ՝

1. ամսական մինչև 279 հազ. դրամ եկամուտ ունեցող վարձու աշխատողների համար, որոնք կազմում են բոլոր վարձու աշխատողների շուրջ 90%-ը (շուրջ 553 հազ. վարձու աշխատող), եկամտային հարկի գծով հարկային բեռն իջնում է,

2. ամսական 279 հազ. դրամից բարձր եկամուտ ունեցող վարձու աշխատողների համար, որոնք կազմում են բոլոր վարձու աշխատողների ընդամենը 10%-ը (շուրջ 62 հազ. վարձու աշխատող), եկամտային հարկի գծով հարկային բեռն բարձրանում է: Հարկ է նկատել, որ մինչև 279 հազ. դրամ եկամուտ ստացողների համար ՀՀ հարկային օրենսգրքով ամրագրված դրույքաչափերով՝ վճարման ենթակա եկամտային հարկի գումարը նվազում է, իսկ մինչև 300 հազ. դրամ եկամուտ ստացողների համար այդ ավելացումը կազմում է ընդամենը 420 դրամ:

Միաժամանակ հարկ է նշել, որ եկամտային հարկի նոր դրույքաչափերի կիրառությունը ոչ միայն չի ավելացնելու ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտները, այլև հանգեցնելու է տարեկան շուրջ 3.8 մլրդ դրամի չափով

¹ Տես <http://www.arlis.am/>:

հարկային եկամուտների կորստի: Այսինքն, եկամտային հարկի՝ ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված դրույքաչափերի կիրառմամբ Կառավարությունը ոչ թե լուծել է լրացուցիչ հարկային եկամուտներ ապահովելու, այլ տնտեսագիտորեն առավել հիմնավորված և եկամուտների վերաբաշխման տեսանկյունից առավել արդարացի հարկման դրույքաչափեր կիրառելու խնդիր, քանի որ եկամտային հարկի՝ 2018 թ. հունվարի 1-ից գործող դրույքաչափերի կիրառությունը ֆիզիկական անձանց հարկման համակարգը կդարձնի իրապես առաջադիմական՝ դրանով իսկ պետությանը հնարավորություն ընձեռելով իրականացնելու եկամուտների վերաբաշխման գործառույթը: Տեղին է նշել, որ ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված եկամտային հարկի առաջին երկու մակարդակի դրույքաչափերի միջև տարբերությունն աննշան է՝ երկրորդ և երրորդ մակարդակների դրույքաչափերի միջև առկա մեծ տարբերության համեմատ: Եկամտային հարկի նման դրույքաչափերի սահմանումը միտված է հարկման արդարացիության սկզբունքի, ինչպես նաև պետության վերաբաշխողական գործառույթի կատարելագործմանը, քանի որ դրանց կիրառությունը ենթադրում է, որ մինչև միջին աշխատավարձի մակարդակում գտնվող եկամուտների համար հարկային բեռն իջեցվել է, իսկ դրանից բարձր եկամուտների համար՝ բարձրացվել:

Աղյուսակ 1

Եկամտային հարկի դրույքաչափերը մինչև 2018 թ. հունվարի 1-ը

Հարկման բազայի ամսական մեծությունը	Եկամտային հարկի դրույքաչափը
Մինչև 120000 դրամը ներառյալ	24.4 տոկոս
120000-ից 2000000 դրամը ներառյալ	29280 դրամին գումարած 120000 դրամը գերազանցող գումարի 26 տոկոսը
2000000 դրամից ավելի	518080 դրամին գումարած 2000000 դրամը գերազանցող գումարի 36 տոկոսը

Աղյուսակ 2

2018 թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած եկամտային հարկի դրույքաչափերը

Հարկման բազայի ամսական մեծությունը	Եկամտային հարկի դրույքաչափը
Մինչև 150000 դրամը ներառյալ	23 տոկոս
150000-ից 2000000 դրամը ներառյալ	34500 դրամ՝ գումարած 150000 դրամը գերազանցող գումարի 28 տոկոսը
2000000 դրամից ավելի	552500 դրամ՝ գումարած 2000000 դրամը գերազանցող գումարի 36 տոկոսը

Աղյուսակներից պարզ է դառնում, որ 2018 թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի» հոդված

150-ի համաձայն՝ մինչև 150 հազար դրամ ամսական եկամուտ ստացող ֆիզիկական անձանց համար սահմանվում է եկամտային հարկի ավելի ցածր՝ 23% դրույքաչափ՝ քան «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության 2015 թ. ապրիլի 2-ի ՀՕ-246-Ն օրենքի հոդված 10-ով ամրագրված 24.4% դրույքաչափն է՝ ամսական մինչև 120 հազար դրամ եկամուտ ստացող ֆիզիկական անձանց համար: Մինչդեռ, արդեն իսկ ընդունված հարկային օրենսգրքով՝ 150 հազար դրամից ավելի եկամուտ ստացող ֆիզիկական անձինք կունենան փաստացի եկամուտների նվազում, քանի որ նրանց եկամուտների նկատմամբ 26%-ի փոխարեն կիրառվելու է եկամտային հարկի 28% դրույքաչափ, որը կարող է կրճատել արտասահմանյան կազմակերպությունների կատարվելիք ներդրումները ՀՀ-ում:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը Հայաստանի տնտեսության ամենահաջողակ և արագ աճող ճյուղերից մեկն է, որը նպաստում է երկրում տեխնոլոգիական նորարարության և արտադրողականության բարձրացմանը: Այն բաղկացած է տեղական և արտասահմանյան ընկերություններից, որոնց գերակշիռ մասը գործում է Երևանում, որտեղ կենտրոնացած են ոլորտի բարձրակարգ մասնագետները և առկա է բիզնես գործունեության համար համապատասխան ենթակառուցվածք:¹

Նշենք, որ տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) ծառայությունների և ծրագրային ապահովման ոլորտը ՀՀ-ՀՆԱ-ում (2010 թ.՝ 1,7%) համեմատելի է այնպիսի երկրների հետ, ինչպիսիք են Գերմանիան և Հնդկաստանը: 2008-2013 թթ. SS ոլորտի տարեկան աճը կազմել է շուրջ 22%:

2010 թ. Հայաստանի Հանրապետությունում գործում էին շուրջ 196 SS ընկերություններ (5200 աշխատող), որոնցից 74-ը՝ օտարերկրյա: Ոլորտի ընդհանուր հասույթը 2010 թ. կազմել է շուրջ 148,8 մլն դոլար: Ընկերությունների շուրջ 55%-ի արտադրանքն ու ծառայություններն արտահանվում են ավելի քան 20 երկիր: 2010 թ. SS արտահանման ծավալները կազմել են շուրջ 91,1 մլն դոլար, որի շուրջ 49%-ը բաժին է ընկնում ԱՄՆ-ին և Կանադային, 24%-ը՝ Եվրամիության երկրներին, 16%-ը՝ ԱՊՀ երկրներին (հիմնականում՝ Ռուսաստանին): 2014 թ. Հայաստանում գործել է շուրջ 400 SS ընկերություն, որոնց ընդհանուր հասույթը կազմել է շուրջ 475 մլն դոլար: Ցուցանիշը կազմում է պետության ՀՆԱ շուրջ 5%-ը ու արտահանման շուրջ մեկ երրորդը: 2010 թ. SS-ն կազմում էր ՀՆԱ շուրջ 1.7%-ը: Ըստ պաշտոնական կանխատեսումների՝ 2019 թ. ոլորտի տարեկան եկամուտը կանցնի 1 մլրդ դոլարը: 2014 թ. SS ոլորտում զբաղված մասնագետների թիվը, 2010 թ. ցուցանիշների համեմատ, կրկնապատկվել է՝ հասնելով շուրջ 11600-ի: 2014 թ. ոլորտում եղել է շուրջ 2000 մասնագետի թափուր աշխատատեղ:

Հնդկաստանի SS շուկան ներկայումս կենտրոնանում է համաշխարհային SS ծառայությունների ոլորտում մատչելի ծախսային լուծումներ տրամադրելու վրա: Հնդկական ընկերությունների ներկայությունը համաշխարհային SS արտադրանքի զարգացման գործում նշանակալի չէ, սակայն աստիճանաբար աճում է: Մյուս ակնառու միտումն այն է, որ SS աշխատատեղերը, որոնք սահմանափակվում են Բանգալորում, սկսում են աշխարհագրական տարածում ստանալ նաև այլ քաղաքներում:

¹ <http://itguide.eif.am>

Բանգալորը հայտնի է որպես Հնդկաստանի SS մայրաքաղաք: Այն համարվում է գլոբալ տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն և Հնդկաստանի խոշորագույն արտահանողն է թե՛ SS, թե՛ ծրագրային ապահովման մեջ: Հնդկաստանի լավագույն Infosys, Wipro, Mindtree և Mphasis IT ծառայություններ մատուցող կազմակերպությունների գլխամասային գրասենյակները գտնվում են Բանգալորում¹:

Աղյուսակ 3

Մաս 1. Եկամտահարկ 60 փարեկանից ցածր անձանց համար		
(1)	Եթե ընդհանուր եկամուտը չի գերազանցում 250,000 հնդկական ռուփին	0%
(2)	Եթե ընդհանուր եկամուտը գերազանցում է 250,000 հնդկական ռուփին, բայց չի գերազանցում 500,000 ռուփին	5%
(3)	Եթե ընդհանուր եկամուտը գերազանցում է 500,000 հնդկական ռուփին, բայց չի գերազանցում 1,000,000 ռուփին	20%
(4)	Եթե ընդհանուր եկամուտը գերազանցում է 1,000,000 հնդկական ռուփին	30%

Աղյուսակ 4

Մաս 2. Եկամտահարկ 60 փարեկանից բարձր, բայց 80 փարեկանից ցածր անձանց համար		
(1)	Եթե ընդհանուր եկամուտը չի գերազանցում 300,000 հնդկական ռուփին	0%
(2)	Եթե ընդհանուր եկամուտը գերազանցում է 300,000 հնդկական ռուփին, բայց չի գերազանցում 500,000 հնդկական ռուփին	5%
(3)	Եթե ընդհանուր եկամուտը գերազանցում է 500,000 հնդկական ռուփին, բայց չի գերազանցում 1,000,000 հնդկական ռուփին	20%
(4)	Եթե ընդհանուր եկամուտը գերազանցում է 1,000,000 հնդկական ռուփին	30%

Աղյուսակ 5

Մաս 3. Եկամտահարկ 80 փարեկան և ավելի անձանց համար		
(1)	Եթե ընդհանուր եկամուտը հասնում է մինչև 250,000 հնդկական ռուփի	0%
(2)	Եթե ընդհանուր եկամուտը հասնում է մինչև 500,000 հնդկական ռուփի	0%
(3)	Եթե ընդհանուր եկամուտը գերազանցում է 500,000 հնդկական ռուփին, բայց չի գերազանցում 1,000,000 հնդկական ռուփին	20%
(4)	Եթե ընդհանուր եկամուտը գերազանցում է 1,000,000 հնդկական ռուփին	30%

Աղյուսակ 6

Ցանկացած ընկերություն	
Ընդհանուր ամբողջական եկամուտը	30% ընդհանուր եկամտից
Ցանկացած տեղական իշխանություն	
Ընդհանուր ամբողջական եկամուտը	30% ընդհանուր եկամտից
Ցանկացած տեղական (երկրի ներսում) ընկերություն	
(i) Եթե ընկերության ընդհանուր շրջանառությունը նախորդ տարում (2015 – 2016) չի գերազանցում 150,000,000 հնդկական ռուփին	25% ընդհանուր եկամտից

¹ https://en.wikipedia.org/wiki/Information_technology_in_India

Քանի որ տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում Հայաստանի Հանրապետությանը մրցակից երկիր է համարվում Հնդկաստանը,¹ ապա որպես համեմատական ստորև ներկայացնենք Հնդկաստանի Հանրապետության եկամտային հարկի դրույքաչափերը:

Ըստ ՀՀ կենտրոնական բանկի տվյալների՝ 2018 թ. հնդկական ռուբլիի միջին փոխարժեքը դրամի նկատմամբ կազմել է 7,39: Այստեղից կարող ենք եզրակացնել, որ մինչև 250000 ռուբլիի կամ 1847500 դրամի դեպքում 60 տարեկանից ցածր աշխատողները հարկ չեն վճարում, որը կնպաստի Հնդկաստանի Հանրապետությունում ներդրումներ կատարելուն, թեև ցանկացած ընկերություն 30% ընդհանուր եկամտից պետք է հարկ վճարի²: Ի տարբերություն Հնդկաստանի՝ Հայաստանի Հանրապետությունում եկամտային հարկ վճարում են բոլոր տարիքային խմբերի ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք՝ կախված իրենց եկամուտների մեծությունից: Սա նույնպես կարող է խոչընդոտել ՀՀ-ում ներդրումների կատարմանը, ուստի անհրաժեշտ է որոշակի հարկային արտոնություններ տրամադրել՝ նպաստելու ՏՏ ոլորտի զարգացմանը:

СОФЬЯ ПРУТЯН

ВЛИЯНИЕ ИЗМЕНЕНИЯ ПОДОХОДНОГО НАЛОГА НА ОСНОВНЫЕ СФЕРЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Ключевые слова: налог на прибыль, ставка, информационные технологии, иностранная валюта.

В статье обсуждаются изменения ставки подоходного налога в Республике Армения, которые также изучались и сравнивались с Индией. В целях поиска изменений темпов влияния на инвестиции иностранных организаций.

SOFYA PRUTYAN

THE INFLUENCE OF THE INCOME TAX CHANGING ON THE MAIN SPHERES OF THE REPUBLIC OF ARMENIA

Key words: income tax, rate, information technology, foreign currency.

The article discusses the income tax rate changes in the Republic of Armenia which also have been studied and compared with India. In the aim to find the influence rate changes on the investments of foreign organizations.

¹ Stu՝ https://en.wikipedia.org/wiki/Income_tax_in_India

² Stu՝ <https://www.cba.am/>